

## ՀՈՒՆԵՐԷՆ ՄԱՐԴՆՈՅ ՓՈՒՍԵՆՑՈՒՄԾ ՀԻՒՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շատեր իրենց տուններուն մէջ շուներ կը պահեն, կը սնուցանեն, կը սիրեն, կը շոյեն, և կը համբուրեն իսկ զանոնք, կամ շունը իր յեզուով մարդուն ձեռքը ու դէմքը կը լզէ: Սակայն շատեր չեն գիտեր թէ այդ շուները վտանգաւոր և երբեմն մահացու հիւանդութիւններ կրնան մարդոց փոխանցել:

Այսպէս, շունը կրնայ մարդու տարափոխել երկու տեսակ քոստութիւն (կիճիք) որոնց իւրաքանչիւրին պատճառը երկու տարբեր շատ փոքր միջատներ են: Բարեբախտաբար դիւրաւ բուժելի հիւանդութիւններ են: Շուները կը փոխանցեն նաև ահաւոր և մահացու հիւանդութիւն մը՝ կատաղութիւնը, որ ամէնուս ծանօթ է:

Կայ ծանր հիւանդութիւն մը ևս, որուն շատեր անծանօթ են: Այդ *Kyste hydatique* կոչուած հիւանդութիւնն է:

Շուները տեսակ մը շատ փոքր երիզորդ (չէրիտ, ճճի) ունին, որ *tania échinocoque* կը կոչուի: Այս երզորդին օգակները, որոնք հարիւրաւոր հաւկիթներ կը պարունակեն, շուներուն կղկղանքին հետ կ'արտաքսուին ու կը վարակեն զանազան ուտեստեղէններ և բանջարեղէններ, կենդանիներու խտոր, ըմպելի ջուրը, որոնց միջոցով նաև կենդանիներն (մասնաւորաբար ոչխարը) ու մարդիկը: Երբ հաւկիթը մարդուն ստամոքսին մէջ կը մտնէ, ստամոքսային հիւթը կը հալեցնէ անոր կեղևը, մէջը դոնուող վեցատամաղմը ստամոքսէն դէպի աղիքները կ'անցնի, և անկէ՝ սև արեան երակներուն շրջանին մէջ խառնուելով, յաճախ լիարդին և երբեմն թոքերէն միոյն մէջ կը տարուի, ուր ան իրեն համար տեսակ մը փամփուշտ (*kyste hydatique*) կը շինէ և անոր մէջ կը սկսի աճել: Այս փամփուշտը շրճանման հեղուկով մը կը լեցուի և երբեմն տղու մը գլխու մեծութեան կը հասնի, ծնունդ տալով աւելի փոքր փոշտերու:

Այս վտանգաւոր հիւանդութիւնը խիստ հազուադէպ կերպով կրնայ ինքնիրեն բուժուիլ: յաճախ տարիներ կը տեւէ և ի վերջոյ հիւանդին մահուան պատճառ կ'ըլլայ, եթէ ժամանակին պէտք եղած վիրաբուժական գործողութիւնը չկատարուի: Պէտք է աւելցնել, որ երբեմն վիրաբուժական դարմանը անգամ կրնայ մահով վերջանալ:

Ուստի, ամէն ընտանիք որ իր տան մէջ շուն կը պահէ, թող այս վերոյիշեալ հաւանականութիւնը գիտնայ, և ըստ այնմ վարուի: Առ ի զգուշութիւն, պէտք է արգիլել շունը ձեռքեր և դէմքեր լզելէ, որովհետև իր լեզուն կրնայ դպած ըլլալ հաւկիթներ պարունակող իր կամ ուրիշ շունի մը կղկղանքին: Պէտք չէ նաև շուներուն ուտելիք տալ մարդոց ծառայող պնակներու և ամաններու մէջ: Նաև պէտք է հեռու պահել զանոնք բանջարանոցներէ որպէսզի, իրենց կղկղանքով չաղտոտեն կանանչեղէնները: